Հայերն օսմանեան բանակում (ԺԴ դարից մինչեւ 1918թ. ուրուագիծ)[1]

(2)

Հայերի զինուորագրութեան հարցը

Հայ-թուրք համակեցութեան պատմութեան ընթացքում եղել են բացառիկ, եզակի դէպքեր, երբ օսմանեան իշխանութիւնները դիմել են հայերի ռազմական օգնութեանը: Ջալալիների ապստամբութեան ժամանակ, երբ Դելի Հասանը 1600-ին յարձակուել էր Սեբաստիայի վրայ, տեղի կառավարիչ փաշան, չունենալով բաւական չափով կանոնաւոր զօրք, զինում է քաղաքի բնակիչներին, այդ թւում նաեւ՝ հայերին: Քաղաքացիք կռւում են, սակայն պարտուելով՝ ենթարկւում են ջալալիների վրէժխնդրութեանը:

1787-ին, երբ պատերազմ ծագեց Օսմանեան կայսրութեան եւ Աւստրիայի ու նրա զինակից Ռուսաստանի միջեւ, օսմանեան բանակը զօրացնելու նպատակով մեծ եպարքոս Եուսուֆ փաշան աննախընթաց որոշում է կայացնում՝ քրիստոնեաներին զինուորագրել: Օրուայ պատրիարք Զաքարիա Կաղզուանցին ստիպուած էր համաձայնուել եւ չորս տարի տեւած պատերազմի ընթացքում իւրաքանչիւր տարի օսմանեան բանակին տրամադրել պահանջուած լաւ պատերազմող 1000-ական զինուոր:

1839-ի նոյեմբերի 9-ին սուլթան Աբդուլ Մեջիդը (1839-1861) Գիւլհանէի արքայական պալատում հռչակեց օսմանեան բարենորոգումների առաջին հրովարտակը՝ Գիւլհանէի Հաթթ-ը Շերիֆը (Վարդաստանի հրովարտակը), որը ծանօթ է Թանզիմաթ անունով: Այն կայսրութեան բոլոր հպատակներին, առանց կրօնի եւ ցեղի խտրականութեան, խոստանում էր հաւասարութիւն, կեանքի եւ գոյքի ապահովութիւն, տուրքերի եւ հարկերի արդար բաշխում եւ կանոնաւոր զինուորագրութիւն: Դա նշանակում էր, որ քրիստոնեաները կարող էին անարգել մուտք գործել օսմանեան բանակի շարքերը: Սակայն Բարձրագոյն դուռը հրաժարուեց քրիստոնեաների զինուորագրութեան գաղափարից եւ շարունակեց գանձել զինուորական տուրքը նախ՝ իչանէ-

---

[1] - *Անահիտ Աստոլեան, Հայկասեան Հայագիտական Հանդէս,ԻՀ հատոր,Պէյրութ, 2008, 15*

ի ասքերիէ (օժանդակութիւն բանակին) եւ ապա՝ քեղէ-ի ասքերիէ (զինուորագրութեան փոխարէն) անուններով։

1847-ին հայերը զինուորական ծառայութեան կանչուեցին կառավարութեան կողմից, երբ օսմանեան բանակը երկրի արեւելեան նահանգներում պայքարում էր քուրդ ինքնիշխան ցեղապետերի դէմ։ Հայերի մասնակցութիւնը քրդերի դէմ մղուած կռիւներում բխում էր դարերով կուտակուած զայրոյթից, քանզի հայ գիւղացիների կեանքի, ունեցուածքի եւ պատուի ապահովութիւնը կախուած էր քուրդ ցեղապետերի քմահաճոյքից։

1864-ին բացուեց Հարբիէի Զինուորական վարժարանը, որը նախատեսուած էր նաեւ ոչ մահմեդականների համար։ Սուլթան Աբդուլ Ազիզի (1861-1876) հրամանով հինգ հայ երիտասարդներ ընդունուեցին վարժարան։ Սակայն նրանց թոյլ չտրուեց հարիւրապետի աստիճանից բարձրանալ։ Մինչեւ 1908 թ. Հարբիէի զինուորական այս վարժարանի դռները փակ մնացին հայերի համար։

1877ի ռուս-թուրքական պատերազմում մեծ կորուստներ կրելով՝ օսմանեան կառավարութիւնը հարկաւոր համարեց զօրք հաւաքագրել նաեւ իր հպատակ քրիստոնեայ ազգերից եւ դիմեց նրանց ներկայացուցիչ պատրիարքներին։ Կ.Պոլսոյ Ազգային երեսփոխանական ժողովի 1877-ի դեկտեմբերի 14-ի նիստի մասնակիցների ստուար մեծամասնութիւնը մերժեց գոհացում տալ կառավարութեան պահանջին, թէեւ եղան նաեւ այդ որոշման ընդդիմադիրներ։ Կառավարութեան զինուորագրութեան առաջարկի հանդէպ Կ.Պոլսոյ Ազգային երեսփոխանական ժողովի այս յանդուգն դիրքը զայրոյթ յառաջացրեց օսմանեան կառավարող շրջանակներում։ Ազգային ժողովի պատմական այս նիստում արտայայտուած տրամադրութիւնները խանդավառութեան ալիք ստեղծեցին բակում հաւաքուած ժողովրդի մօտ։

1878-ից հինգ տարի առաջ Ազգային երեսփոխանական ժողովում գաւառներում հարստահարութիւնների հարցը քննարկելիս՝ կազմուած յանձնաժողովի անդամների մեծամասնութիւնը գտաւ, որ քեղէ-ի ասքերիէ հարկի պատճառով ժողովուրդը շատ է հարստահարւում, ուստի դրա փոխարէն արժէ, որ զինուոր տրուի օսմանեան բանակին։ Այդ օրերի պատրիարք Մկրտիչ Խրիմեանը մերժեց այդ գաղափարը՝ հարցը թողնելով ապագային, երբ ապահովուի քրիստոնեաների եւ մահմեդականների հաւասարութիւնը բանակում։

Օսմանեան իշխանութիւնները քաջ գիտակցում էին, որ բանակում չէր կարող լինել հաւասարութիւն: Դեռ սուլթան Մահմուդ Բ-ն (1808-1839) երկրի մահմեդականների վրայ ծանրացած զինուորական ծառայութեան պարտականութեան բեռը թեթեւացնելու նպատակով մտադրւում է կայսրութեան հպատակ բոլոր ազգերի համար պարտադիր զինուորագրութեան օրէնք սահմանել: Այդ եւ, մասնաւորապէս, հայերի զինուորագրութեան խնդրի շուրջ 1839-ի ապրիլի 5ին Մալթիայից Գերմանիա՝ իր բարեկամին ուղղուած նամակում Մահմուդ Բ-ն յայտնում է այն տեսակէտը, որ Անատոլիայի հայերը կարգապահութեան սովոր, չափաւոր, ուժեղ եւ կորովի ազգ են եւ արաբներից ու մահմեդական քրդերից առաւել պիտանի են օսմանեան պետութեանը, սակայն հայերը կը ճգմուեն մահմեդականներից կազմուած զօրամիաւորումներում, կը չքանայ նրանց եռանդը եւ յառաջխաղացման ամէն ցանկութիւն, ուստի արդիւնաւէտ կարող էր լինել զուտ հայերից կազմուած առանձին ջոկատների եւ վաշտերի ստեղծումը, սակայն մահմեդական մոլեռանդութիւնը խոչընդոտ կը լինի նման զօրամիաւորումների գոյութեանը:

1908-ի Օսմանեան սահմանադրութեան վերահռչակումից յետոյ հայերը եւ երկրի միւս քրիստոնեաները օսմանեան խորհրդարանում պահանջեցին զինուորագրուել եւ հաւասար իրաւունքներով ծառայել օսմանեան բանակում: Հայերի պահպանողական տարրը դէմ էր զինուորագրութեանը, իսկ երիտասարդութիւնը՝ կողմնակից: 1910-ի օսմանեան խորհրդարանի ընդունած օրէնքից յետոյ երկրի բաղկացուցիչ բոլոր ազգերը ենթակայ էին զինուորական ծառայութեան: Զինուորագրութեան օրէնքի ընդունուելուց յետոյ վերացաւ քեղէղ-ի ասքերիէն: 1910-ի օգոստոսին եւ սեպտեմբերին հրատարակուած զօրակոչի հրամանը խանդավառութեամբ ընդունեցին հայ երիտասարդները, որովհետեւ ստորացուցիչհպատակ, ոչխար, գերի բառերի ծանր բեռը վերցուեց նրանց ուսերից:

Զինուորական ասպարէզը բացուեց հայերի համար: Օգտուելով ընձեռուած հնարաւորութիւնից՝ հայ երիտասարդները սկսեցին ուսանել Հարբիէի վարժարանում եւ շատ շուտով ցուցաբերեցին իրենց կարողութիւնները զինուորական ասպարէզում: Թուրք սպաները հայերի կարգապահութիւնը, հաւատարմութիւնը, մաքրասիրութիւնը գնահատելով՝ սկսեցին թուրք զինուորներին փոխարինել հայերով: Շատերը շուտով զինուորական աստիճանի բարձրացում ունեցան: Թէ՛ Բալկանեան պատերազմի եւ թէ՛ Ա Աշխարհամարտի ժամանակ հայ զինուորականները կատարեցին

բազում քաջագործութիւններ եւ թուրք բարձր զիւորականութեան կողմից գովեստի արժանացան՝ փաստելով, որ հայը ոչ միայն ճարտար առեւտրական եւ արհեստաւոր է, այլեւ՝ քաջ զինուոր։

Բալկանեան պատերազմի ժամանակ Եանիայի համար մղուող մարտերում հայ զինուորները գլխաւորապէս թնդանօթաձիգներ էին։ Թուրք հրամանատարները գովեստով էին խօսում նրանց լաւ նշանառու լինելու եւ ցուցաբերած տոկունութեան ու քաջութեան մասին։

1914-ի օգոստոսի 1-ին սկսուեց Ա Աշխարհամարտը։ Որպէս Գերմանիայի դաշնակից՝ օսմանեան պետութիւնը ոկտեմբերին յայտարարարեց պատերազմին իր մասնակցութեան մասին։ Օսմանեան բանակ զօրակոչուեցին 18-45 տարեկան ռազմունակ շուրջ 100 հազար հայ տղամարդիկ՝ ըստ մեզ յայտնի տուեալների։ Նրանք միացան մինչ այդ օսմանեան բանակում ծառայութեան մէջ գտնուող հայ զինուորականութեանը։

Ջնայած բանակում հայ զինուորների համար ստեղծուած ծանրագոյն պայմաններին՝ նրանք փութացել են կատարել իրենց զինուորական պարտականութիւնները եւ այնպէս անձնուիրաբար, որ կարնոյ ճակատում գերի ընկնելու վտանգից ազատել են էնվէրին։ Դրանից յետոյ նա հայ զինուորներների մասին գովեստի եւ շնորհակալութեան խօսք է ուղարկել Կ.Պոլսոյ Հայոց պատրիարք Զաւէն Տէր-Եղիայեանին։

Միւս կողմից, սակայն, պատերազմի առաջին օրերից երկրում սկսուեց հայ զինուորների դասալքութեան մասին կեղծ քարոզչութիւնը։ Դա միայն պատրուակ էր հայ ժողովրդի բնաջնջման երիտթուրքական կառավարութեան կանխամտածուած ծրագիրն իրականացնելու համար։

1915-ի փետրուարի 12-ին սկսուեց օսմանեան բանակի հայ զինուորականութեան զինաթափումը, որից յետոյ նրանցից կազմուեցին ամալիէ թաբուրիները (բանուորական վաշտեր)։ Նոյն ժամանակ սկսուեցին հայ սպաների մեկուսացումն ու ձերբակալութիւնները։ Դրան հետեւեց ռազմական նախարար էնվէրի օսմանեան բանակում ծառայող հայ զինուորների ոչնչացման մասին հրամանը։ Շուրջ 300 հազար հայ զինուորականութիւնը թիկունքում խումբ-խումբ սպանուեց անօրինակ դաժանութեամբ։

Ա Աշխարհամարտի առաջին օրերից զինուորական հիւանդանոցներում ծառայող հայ զինուորական բժիշկներից շատերը ընկան պատերազմի դաշտում։ Ոմանք մահացան իրենց պարտականութիւնները կատարելու ժամանակ՝ բծաւոր տենդով

վարակուած թուրք զինուորներին խնամելիս: Իսկ շատ շատերը անգթօրէն խողխողուեցին պարզապէս հայ ծնուած լինելու համար: 1915ի ապրիլի 24-ի գիշերը ձերբակալուեց նաեւ բանաստեղծ եւ արձակագիր **Ռուբէն Սեւակը**, *ով Ա. աշխարհամարտի առաջին ամիսներից, որպէս զինուորական բժիշկ, հարիւրապետի աստիճանով ծառայում էր Մաքրիգիւղի զինուորական հիւանդանոցում: Նրան վիճակուեց անցնել մահուան դատապարտուած հայ մտաւորականների ուղիով՝ աքսոր Անատոլիայի խորքերը, տառապագին սպասում եւ բարբարոս խոշտանգում:*

Բժիշկների հիմնական նպատակը, նրանց կոչումն է պահպանել մարդուն եւ նրա տեսակը, սակայն հայերի բնաջնջման ծրագրի հեղինակներից ու գլխաւոր կազմակերպիչների մէջ եղել են թուրք բժիշկներ (Նազիմ բէյ, Բէհահէտտին Շաքիր): Նրանցից շատերն անձամբ են կատարել ոճիրներ եւ հենց իրենց հայազգի պաշտօնակիցների նկատմամբ: Ու եթէ Ա. Աշխարհամարտի տարիներին հայ բժիշկների մէկ մասի կեանքը խնայուեց, ապա դրա գլխաւոր պատճառը ռազմաճակատում թուրք բժիշկների պակասն էր:

Այսպէս ոչնչացնելով արեւմտահայութեան մարտունակ ուժերը՝ թուրքական կառավարութիւնը իրականացրեց հայերի զանգուածային տեղահանութեան եւ կոտորածի ցեղասպանութեան իր կանխամտածուած ծրագիրը:

Այս կերպ հատուցեցին թուրքերն օսմանեան բանակի զօրացմանը հայերի դարաւոր տքնութեան դիմաց: Նրանք իրենց «երախտագիտութիւնը» շարունակեցին յայտնել՝ հայերին ջնջելով օսմանեան զինուած ուժերի պատմութեան էջերից եւ յայտարարելով, թէ միայն մահմեդականներն ու թուրքերն են արիւն թափել օսմանեան պետութեան համար, իսկ քրիստոնեաները, նրանց հետ նաեւ հայերը, ազատուած լինելով զինուորական պարտականութիւնից, հարստացել են եւ բարգաւաճել:

Հայ, հայազգի, ծագումով հայ գեներալներ, մարշալներ, ծովակալներ[2]

Գ. Նժդեհը, բնութագրելով հայերի ռազմական ներուժը, նրանց համարել է «անբանակ զորավարների ազգ: Եթե Գ. Նժդեհի

[2] - *Էդիկ Բաղդասարյան, Հայկական Հանրագիտարան, 10 հատորով, Անգլերեն, Սփյուռքի հատոր:*

բնութագրումը ազգային ինքնասիրությունը շոյող է, ապա այլազգիները՝ սկսած Հաննիբալ Բարկայից, հայ զինվորին որակել են որպես ամենամարտունակ զինվորի: Բյուզանդական կայսրությունն առավելապես հիմնված է եղել հայկական ռազմական ներուժի վրա, և բյուզանդական բանակից հայկական ներուժի օտարմամբ է, որ կայսրությունը, աստիճանաբար տկարանալով, վերացել է պատմության թատերաբեմից: Իմիջիայլոց, տարբեր ժամանակներում մոտ 150 հայ զորավարներ առաջնորդել են հունական բանակներին: Հայը սեփական պետականության բացակայության պայմաններում, հաճախ է ստիպված եղել իր ռազմական ներուժն ու ունակությունը ծառայեցնել օտարին՝ հասնելով հաջողության ու ռազմական բարձրագույն կոչումների:

Հայն այդքան մարտունակ լինելով հանդերձ, անկարող է եղել պահպանելու սեփական պետականությունը, որովհետև, բացառություններով հանդերձ, հայոց պետականության գահին միշտ էլ պետական մտածողությունից զուրկ գաճաճներ են բազմել, որոնց նպատակը սեփական շրջապատին պարարտացնելն է եղել և աթոռը պահելը: Բայց սա քննարկման այլ թեմա է:

Հայերից առաջինը զինվորական բարձրագույն կոչման արժանացած զորականը հավանական է՝ եղել է Մոլդովայի մեծ պոստելնիկ (իշխանական պալատի մարշալ) Յուրաշկո Վարդիկը: Հայ զորականները գեներալիսիմուսի և մարշալի կոչման արժանացել են մոտ 3 տասնյակ երկրներում: Արժանին պետք է մատուցել օտար ափերում դեգերող հայ ռազմիկին, որ երբեք ստոր չի գտնվել և ազնվորեն ծառայել է իր համար երկրորդ հայրենիք դարձած ազգին: Թերևս լավագույն ապացույցը Բենգալիայի (Հնդկաստան) գլխավոր զորահրամանատար (1760), սպարապետ Գորգին խանի (Գրիգոր Հարությունյանը) պատասխանն է՝ ուղղված անգլիացիներին, երբ վերջիններս նրան առաջարկում են, թողնելով հնդիկներին, անցնել իրենց մոտ ծառայության. խոստանում են մեծամեծ պաշտոններ ու հարստություն. «Երբ ես ոչ մեկի հայտնի չէի, Կասումալի խանը հավատաց ինձ և բարձրացրեց: Այդ անել ես չեմ կարող: Աստված ոչ անի, որ ես սրիկա լինեմ, առավել ևս, որ իմ ազգին հատուկ չէ դավաճանությունը: Իմացեք՝ ում որ հայերը ծառայում են, ծառայում են ազնվորեն ու մաքուր սրտով և հավատարիմ են մնում մինչև մահ»:

Ինչ խոսք, իր հավատարմության համար Գորգին խանը հատուցեց մահով:

Գորգին խանից առաջ ևս մեկ հայորդի՝ Միրզա Ղուլղունելը

դեռևս 1620-1656 թթ. եղել է Հնդկաստանի Մողոլական կայսրության բանակի գլխավոր հրամանատար՝ էմիրի (մարշալ) կոչումով, նրան անվանել են «Մողոլ քրիստոնյաների հայր», իսկ կաթոլիկ վանական Անտոնիոս Բոտելհոյը նրա մասին ասել է. «Միրզա Ղուլղունելը որքան ազնվական էր ծագումով (իմա՝ հայ- Գ.Ա.), այնքան գերապանծ էր իր գործերով և հռչակված՝ իր քրիստոնեական բարեպաշտությամբ: Էմիր մըն էր աստիճանով, Նումա մը խաղաղության մեջ, Աղեքսանդր մը պատերազմի, կեսար մը երկունքի մեջ... Մողուլ թագավորները կը պարտին իրեն հազար հաղթանակ...»:

Թվում է, թե հայերը Բիրմայում երբեք հզոր գաղութ չեն ունեցել, մինչդեռ Բիրմայում (այժմ՝ Մյանմար) 1759-ին գեներալիսիմուսի կոչում է ստացել Գրիգոր Այվազյանը, որ ցմահ եղել է նաև Սիամի կառավարիչը: Հայերից տարբեր ժամանակներում Օսմանյան կայսրության մեծ վեզիրի պաշտոնը զբաղեցրել են զեյթունցի (որոշ աղբյուրներում՝ մարաշցի) Դամատ Խալիլ փաշան (17.11.1616-18.01.1619 և 01.12.1626-06.04.1628), մալաթիացի Սուլեյման փաշա էրմանին (19.08.1655-28.02.1656) և համշենահայ Դամատ Մեհմեդ Ալի փաշան (04.10.1852-14.05.1853), որոնք ի պաշտոնե կրել են նաև սարդարէքբեմի (գեներալիսիմուսի) կոչում: Օսմանյան կայսրությունում պալայի (մարշալ) և մուշիրի (ոմանք մուշիրի զինվորական աստիճանը բարձր են համարում պալայից և պալայի զինվորական աստիճանը հավասարազոր են համարում բանակի գեներալին) կոչման են արժանացել Լեռնային Լիբանանի կառավարիչներ Արթին Կարապետ փաշա Դավությանը (1816-1873) և Հովհաննես փաշա Կույումճյանը (1858-1933), Օսմանյան բանակի գլխավոր դեղագործ Ֆերիտ Թերճիմանյանը (Ֆերդի Թարջումանյան): Մի քանի աղբյուրներում հիշատակվել է նաև Գրիգոր Շաբանյանին պալայի (մարշալի) կոչման ներկայացվելու մասին (տե՛ս Համիկ Ստեփանյան, Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Եր., 2012, էջ 335):

1799-ից գեներալիսիմուսի կոչում է կրել նաև մոր կողմից հայկական արմատներ ունեցող, ռուսական բանակի զորահրամանատար Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը (1730-1800), եթե Ալ. Սուվորովի մոր՝ Դշխուհու (այլ աղբյուրներով՝ Տուշկուգի) Թադևոսի Մանուկովայի (Ավդոտյա Ֆեդոսեևնա Մանուկովա)՝ Աստրախանի հայկական գերդաստանից սերած լինելու հանգամանքը թերևս ոչ ոքի մոտ կասկած չի հարուցում, ապա հոր կողմից նրա ծագումը վեճերի տեղիք է տվել: Սուվորովի

*մայրական պապը Ֆեոդոսեյ (Թադևոս, Թեոդոս) Սեմյոնի (Ստեփանի) Մանուկովը (1668-1738՞) 1725-ին նշանակվել է հայրենակալվածքների (*вотчина*) կոլեգիայի փոխպրեզիդենտ՝ բրիգադի գեներալի աստիճանով: Որոշ աղբյուրներ Ա. Սուվորովի հայրական ծագումը բխեցնում են Արցախում հայտնի Շահնազարյան գերդաստանից (որոնց սերունդները մինչ օրս ապրում են Հս. Օսեթիա-Ալանիայում և հպարտությամբ են նշում իրենց ազգակցությունը Ալ. Սուվորովի հետ), այլք՝ շվեդական Սուվար գերդաստանից: (Ալ. Սուվորովն ինքնակենսագրականում նշում է, որ իր նախնիները շվեդական ծագում ունեն, նույն ինքնակենսագրականում Ալ. Սուվորովն իր իսկ ծննդյան թիվը 2 տարով սխալ է նշել: Հարց է ծագում՝ գեներալիսիմուսին վերագրվող ինքնակենսագրականի հեղինակն արդյոք ի՞նքն է:) Վկայաբերենք նաև, որ Ալ. Սուվորովը սերտ կապեր է ունեցել Ռուսաստանի հայկական շրջանակների հետ: 1780-ին Ա. Սուվորովը կայսրուհի Եկատերինայի և իշխան Պոտյոմկինի հետ ներկա է գտնվել Պետերբուրգի հայկական եկեղեցու բացմանը: Նույն թվականին նշանակվել է Աստրախանի զորամիավորման հրամանատար, որը պետք է իրականացներ Հայաստանի ազատագրումը: Սուվորովին է վերագրվում «*Я иду освобождать Карабах-родину моих предков» (А. В. Суворов, «Мецамор» № 4, сентябрь, 2004) դարձվածքը, որը համարյա թևավոր խոսքի ուժ է ստացել: 1778-ին Ալ. Սուվորովի գլխավորությամբ է կազմակերպվել Ղրիմի 12600 հայերի գաղթը Դոնի տափաստան: 1786-ին նա դարձել է Շահամիր Շահամիրյանի/Մովսես Բաղրամյանի՞ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»՞ գրքի ռուսերեն թարգմանության բաժանորդ: Նա նամակագրական կապեր է ունեցել Լազարյանի և Արղությանի հետ, ինչպես նաև լրագրային մի հրապարակման համաձայն (Հ. Մինասյան. «Սուվորովը զտարյուն հայ է»), գտնվելով Հս. Կովկասում, կապ է հաստատել Ալանիայում ապրող իր ազգականների հետ: Վերջին շրջանում ռուսական մամուլում ավելի հաճախակի են դարձել այն հրապարակումները, որոնցում ընդհանրապես բացառում են Ալ. Սուվորովի հայկական արմատները: Հետաքրքիր է, որ նման հրապարակումներ են եղել նաև ԽՍՀՄ ինժեներական զորքերի մարշալ Ս. Ագանովի (նախնիները՝ Օհանյան) մահից և Կ. Շչյոլկինի (Մետաքսյան) մահից հետո: Կարծում ենք՝ պարզ է, թե ովքեր են կանգնած ռուսական պատմագիտության հետևում և որտեղից են առաջնորդվում նման հրապարակումները:*

Մայրական գծով Ռուսաստանի Բեկլեմիշևներ հայկական

տոհմից է սերել նաև Ռուսաստանի պատմության մեջ պատմական մեծ դեր խաղացած, ռուսական բանակի գեներալ-ֆելդմարշալ Միխայիլ Կուտուզովը (Գոլենիշչև-Կուտուզով)։ Որոշ տեղեկությունների համաձայն՝ Մ. Կուտուզովը նաև հայրական գծով ունի հայկական արմատներ և սերել է Արցախի Մարդակերտի շրջանում հայտնի Կլոտըզ տոհմից, սակայն այս տեղեկությունները լուրջ ուսումնասիրությունների կարիք ունեն և որպես աներկբա ճշմարտություն չեն կարող ընդունվել։ Ռուսական պատմագրության մեջ, ըստ տոհմագրական լեգենդի՝ Բեկլեմիշևների նախնի Գաբրիելը եկել է «Պրուսից» և ծառայության է անցել Մոսկվայի մեծ իշխան Վասիլի Առաջին Դմիտրևիչի մոտ։ Պատմաբան Պ. Ն. Պետրովը ենթադրում է, որ Բեկլեմիշևները եղել են նովգորոդյան ազնվականության ներկայացուցիչներ, ոմանք էլ ենթադրում են, որ նրանք ունեն թաթարական ծագում։

Այնուամենայնիվ, Բեկլեմիշևների հայկական ծագումն անառարկելի է։ Նրանց զինանշանը, չնայած սկանդինավյան և սլավոնական ազդեցության, ակնհայտ հայկական ծագում ունի. ռուսական հերալդիկայում համարյա բացակայում են արծիվները (նկատենք, որ Ռուսաստանի զինանշանը՝ երկգլխանի արծիվը, փոխառնված է Բյուզանդիայից, իսկ վերջիններս այն փոխ են առել Արծրունիներից), մինչդեռ Բեկլեմիշևների զինանշանում ոչ միայն նրանք առկա են, այլև հիշեցնում են Արծրունիների զինանշանի վերափոխված տարբերակը։ «Բեկլեմիշ» բառը թյուրքական ծագում ունի և նշանակում է «պահպանող, հսկող»։ Ռուսական ազգանունների մեջ գրեթե բացառվում են թյուրքական ծագմամբ ազգանուններ, մինչդեռ հայերի համար այդքան առօրեական դարձած Նալբանդյան, Դեմիրճյան և բազմաթիվ ազգանուններ թյուրքական ծագում ունեն։

Ռուսական պատմագրության մեջ Բեկլեմիշևների մասին առաջին վկայությունները վերաբերում են XV դարին՝ ճիշտ այն ժամանակաշրջանին, երբ սկսվել է հայերի հոսքը ռուսական հողեր, իսկ թյուրքական աշխարհում այդ ժամանակներում ազգանուններ կրելը դեռս ընդունված չէր։

Մայրական գծով հայկական արմատներ ունի նաև աֆղանական բանակի սերդար (մարշալ) Սերդար Իշայի խանը (XIX դ.) (տե՛ս Հյուզ, Հայերը Քաբուլում (1880), Րաֆֆի, Հայերը Քաբուլի մեջ)։ Բազմաթիվ վիճաբանությունների տեղիք է տվել և մինչ օրս առօրեական է ԽՍՀՄ միակ գեներալիսիմուս Վ. Ստալինի ծագման հայկական վարկածը։ Չցանկանալով հեռու գնացող հետևություններ անել, ուղղակի նշենք, որ Ստալինի հայկական

ծագումն ընդունել է ԱՄՆ-ում ապրող նրա հարազատ դուստրը՝ Սվետլանան, Ա. Անտոնով-Օվսեենկոն (տե՛ս «Բռնակալի դիմանկարը» (Մոսկվա, 1995թ.)), որը վերոհիշյալ գրքում վկայակոչելով բազում փաստեր, ինչպես նաև ծագումնաբանների կարծիքը, նշում է, որ Ստալինը տիպիկ հայ է, Ալ. Լապշինը (տե՛ս «Ճակատագրական բախում» (Մոսկվա, 1997թ.)), նշում է, որ նրա մայրը՝ Կետոն (Կեկան) վրացացած հայուհի է, իսկ հայրը՝ Թիֆլիսցի կոշիկի գործարանատեր Ադիլխանովը, որոնց անօրինական կապի արդյունքում ծնվել է Իոսիֆը: Ի. Ստալինի հայկական ծագումը ընդունել է նաև ակադեմիկոս Լյուդվիգ Միրզոյանը: Նա պնդում է, որ Իոսիֆ Ջուղաևին Ցխինվալիի հայկական եկեղեցում մկրտել է Սահակ Տեր-Խախանյանցը, ինչը պնդում է նաև Վ. Համբարձումյանի տուն-թանգարանի տնօրեն, աստղաֆիզիկոս Գրիգոր Բրուտյանը, իսկ գիտությոյան դոկտոր Պիոն Հակոբյանը հավաստում է, որ Սբ. Էջմիածնում եղել է Ի. Վ. Ստալինի մկրտության վկայականը:

Հայեր են եղել Իրանի սարդարներ (մարշալ) Մեհմեդ Ղուլի խանը (նախնիները՝ Մուսաբեկյանց) (XVIII դ.), Իսկանդար խան Սեթխանյանը (1864-1953) և Արևելքի Գարիբալդի անվան արժանացած Եփրամ խանը (Դավթյան Եփրեմ Դավթի) (1868-06.05.1912), որ ավելի քան 60 ճակատամարտ է տվել, այնքան, որքան հայազգի գեներալիսիմուս Ալ. Սուվորովը: 1868-ին Շվեդիայում մարշալի կոչման է արժանացել Օհան Ստեփան Դեմիրճյանը (Հաբիբ բեյ, Տեմիրժիոն) (1936-1877)):

«Ասպետ Մեծի Տանն Կիլիկիո» Արամ Կարամանուկյանը սիրիայի զինված ուժերի հիմնադիրներից է: Արամ Կարամանուկյանը ծնվել է 1910 թ. Մայիսի 19-ին Աթենքում (այժմ՝ Գազիանթեփ - Արեւմտյան Հայաստան, ժամանակակից Թուրքիա, մահը 1996 թ. դեկտ. 23-ին ԱՄՆ-ի Նյու Ջերսի): 1948-ին նա առաջին արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում Սիրիայի բանակի հրամանատարներից մեկն էր: 1962 թ.-ին նա ստացել է գեներալ-լեյտենանտի կոչում, 1964-ին թոշակի անցել ու ծառայել Սիրայի նախագահ Հ. Ասադի խորհրդական: Ն աեղել է նաև խորհրդարանի անդամ:

Ռուսներից և ուկրաինացիներից բացի, խորհրդային ազգերից մարշալի կոչման են արժանացել միայն հայ զորականներ՝ ԽՍՀՄ մարշալ Հովհաննես Բաղրամյանը, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խամփերյանցը (Սերգեյ Խուդյակով), ինժեներական զորքերի մարշալ Սերգեյ Ագանովը, իսկ Հայկ Հովսեփյանը և Անաստաս Միկոյանն ունեցել են ԽՍՀՄ 1-ին կարգի

բանակային կոմիսարի կոչում:

Բազմաթիվ հրապարակումներ են եղել նաև ԽՍՀՄ և Լեհաստանի մարշալ Կոնստանտին Կ. Ռոկոսովսկու հայկական ծագման մասի (տե՛ս Վ. Սաֆարյան, Ազատն Միևնաս. հուշագրություն, «Новое время»,11.11.1999 և այլն): Կ. Ռոկոսովսկու նախնիները սերել են Անիից գաղթած հայկական ընտանիքից: 1968-ին Երևանում Կ. Ռոկոսովսկին ասել է իր հայկական արմատների մասին՝ հավաստելով, որ իր նախնիները գաղթել են Անիից: Հեռավոր հայկական արմատներ ունի ռուսական բանակի գեներալ-ֆելդցեյխմեյստեր (գեներալ-ֆելդմարշալ) Ալեքսանդր Բագրատիոն-Իմերեթինսկին (1674-1711):

ԽՍՀՄ նավատորմի ընդամենը 3 ծովակալներից մեկը եղել է Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան): Ազգությամբ հայ են եղել նաև Ռուսական կայսրության ծովակալներ Վ. և Պ. Զիչագովները, Ա. Ասլանբեկովը,Գ. Բուգաղովը, Լ. Սերեբրյակովը (Ղ. Արծաթագործյան): Հայ ծովայինները ծովակալի կոչման են արժանացել նաև Չիլիում՝ Հ. Կույումջյան-Բերգամալին, Մեծ Բրիտանիայում՝ Ա. Ավագյանը, Իրանում՝ Ս. Եղիազարյանը, Բրազիլիայում՝ Ն.-Զ. Պողոսյանը, Ու. Քյոթենջյանը, ԱՄՆ-ում՝ Ռոբերտ Իգնատիոսը և այլուր: Ծովակալի կոչում է ունեցել նաև Ավստրո-Հունգարիայի նավատորմի վերջին գլխավոր հրամանատար հայազգի Միկլոշ Խորտին: Այլ երկրներում եղել են հայազգի նշանավոր զինվորականներ. Արգենտինայում Յանոս Յեց՝ Ռազմական Ակադեմիայի հիմնադիր-տնօրեն: Բելառուսում հակաօդային պաշտպանության գեներալ-գնդապետ՝ Սրադար Սարդարով: Բուլղարիայի ցարերից մասամբ ահյ Սամուիլ, Դավրիլ Ռադոմիլ, Պետրոս Դելյան: Վրաստանում՝ Բեբուտաշվիլին, որը հայտնի է որպես Բեբուտաշվիլու, վրացի ազնվական հայ գերդաստան է, որը 17-րդ եւ 18-րդ դարերի ընթացքում կարեւոր դերակատարություն է ունեցել Թբիլիսիի քաղաքային տնտեսական եւ հասարակական կյանքում, այնուհետեւ 19-րդ դարում ծառայել է Ռուսաստանի կայսրության ռազմական ուժերին: Նիկոլ Դուման 1867-1914թթ. Ռազմական առաջնորդ եւ անդամ ՀՅԴ կուսակցությունը: Նիկիտա Շահնազարյան գեներալ-լեյտենանտ, ռուս-թուրքական պատերազմում (1877-78) որի գերեզմանը գտնվում է Խոջիվանքում[3]: ԱՄՆ-ում՝

- *Աննա Դեր-Վարդանյան, առաջին կին, ԱՄՆ-ի ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատար:*

[3] - *Էդ. Բազդասարյան, նշվ. աշխ.:*

• *Էրնեստ Հ. Դերվիշյան, ԱՄՆ բանակի զինվորը եւ ԱՄՆ զինված ուժերի բարձրագույն պատվո շքանշանը, Պատվո մեդալ, Երկրորդ համաշխարհային պատերազմի իր գործողություններ համար։*

• *Քաղաքացիական պատերազմի ժամանակ ԱՄՆ ռազմածովային սպարապետ Խաչատուր Փոլ Կարապետյանը։*

• *Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կռվող օդաչու Կարլ Գենիան։*

• *Պոլ Ռոբերտ Իգնատիուսը, ծառայել է ռազմածովային ուժը եւ դարձել ԱՄՆ պաշտպանության նախարարի օգնական Լինդոն Ջոնսոնի։*

• *Երկրորդ համաշխարհային պատերազմում ծառայած կանանց օժանդակ բանակի կորպուսի (WAAC) աշխատակից Սյու Սարաֆյան Ջիլը։*

• *Ջորջ Յուսկալյան, ԱՄՆ բանակի գնդապետ, որը ծառայեց Երկրորդ համաշխարհային պատերազմի, Վիետնամական պատերազմի եւ կորեական պատերազմի։*

• *Հարի Կիզիրյան, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Մարինե կորպուսը եւ Ռոդ Այլանդի ամենապատվավոր զինծառայողը։*

• *Ջոն Քիզիրյան, Բանակի անդամ, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Կորեայի պատերազմում, Վիետնամում պատերազմում եւ ենթադրվում է ԱՄՆ-ի ամենալավ ամերիկահայերից։*

• *Վիկտոր Մազաքյանը, Մարինե կորպուսը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եւ համարվում է պատերազմի ամենանշանավոր ամերիկյան զինվորներից մեկը։*

• *Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ ռազմական հրամանատար Մոնթե Մելքոնյանը*[4]։

2009-ին լույս տեսած Տ. Հայազնի և Գ. Ղազարյանի «1000 հայազգի գեներալներ, ծովակալներ» հանրագիտարանում (որը լուրջ ճշտումների կարիք ունի) հայերից ըստ ժամանակագրության որպես Օսմանյան կայսրության սարդարէքրեմներ (գեներալիսիմուսներ) են հիշատակվում Խալիլ փաշան (XVII դ.), Խոսրով փաշան (XVII դ.), Դամադ Իբրահիմ փաշան (...-1730), Մեհմեդ փաշա Էսսեիդը (XVIII դ.), Նուրյան փաշան (XIX դ.), Հակոբ փաշա Գազազյանը (1832-1891), Միքայել փաշա Փորթուգալյանը (1842-1897), Հարություն փաշա Տատյանը

[4] - *Էդ. Բազդասարյան, նշվ. աշխ. էջ 315։*

(Հարութիւն-Գարեգին, Արթին բեյ) (1830-1901), Աբրահամ երամյան փաշան (19-20-րդ դդ.), Հովհաննես փաշա Սագզյանը (1836-1912)։ Նույն հանրագիտարանում որպես Օսմանյան կայսրության մուշիր է հիշվում Նաում փաշա Թիվթիվնճին (1883), և պալաներ՝ Միքայել փաշա Խորասանճյանը (1902), Գաբրիել փաշա Նորատունկյանը (1900), Սահակ Ապրոն, Նշան Սեֆերյանը (1904), Զարեհ էֆենդի Տիլպերը (1904)[5]։

[5] - *Գագիկ Արծրունի, «Անկախ», Ապրիլի 11, 2013։*

Armenian Intelligence

The Intelligence authority of the NSS of RA is carrying out intelligence activities in accordance with its functional responsibilities in the territory of the Republic of Armenia and from the territories of foreign states within its competences envisaged by RA legislation and under the law of the Republic of Armenia on ‘’RA National security authorities’’. Under the Charter of the National Security Service of the Republic of Armenia, the NSS of RA carries out the operational governance of the work of all state bodies and units that carry out intelligence activities related to the national security matters in the territory of Armenia.

The intelligence authority of the NSS of RA is one of the key components of the national security in the state governance system, and it is aimed to protect the individual, society and state security from external threats. Within the framework of its functions the intelligence authority obtains, develops and analyses intelligence to report to the top leadership of RA in order to confront the national security challenges of RA and external threats against the state, as well as to to give effective solutions to the problems concerning the vital interests of RA in the area of foreign policy. While carrying out its intelligence activities to deal with the problems it faces, it also supports the normal development of Armenia in the fields of military technology, economy, science and technology, etc.

Intelligence is one of the important tools of security and effective governance for every state. From the very first day of independence Armenian intelligence developed and strengthened in times of ordeals due to the effective use of best experience of Armenian statehood’s previous periods and developed and strengthened intelligence mind and peculiarities of this field.

The intelligence authority of the NSS of RA passed with honor the tests dictated by war conditions and took its important and irreplaceable position in the state governance system of Armenia in harmony with the development and progress of the state.

As a matter of fact everyday hard and responsible work of the officers of this field is not subject to disclosure and remains behind a veil of secrecy for decades due to the peculiarities of intelligence officer’s profession. Intelligence officers, not expecting public appreciation for their work, make their indispensable contribution for the achievement of the unwavering goal of progress and further development of the Republic of Armenia.

Intelligence officers of Armenian origin

Intelligence including foreign intelligence activities are the activities of national security authorities aimed at obtaining information on external and internal security threats and strengthening the foundations of the State.

The history of intelligence, especially the period of last two centuries, shows that the true intelligence officer, whatever character traits he has, first of all is known for his high intelligence and analyzing skills in particular. Intelligence is often defined as a battle field of highly intelligent

people. Those are the people, who prove that intelligence activities during the war and peace are effective due to their quality rather than quantity.

